

## Անկյուններ

Մեկ կետից դուրս եկող 2 ճառագայթներով կազմված պատկերը կոչվում է **անկյուն**:


Անկյուն կազմող ճառագայթները կոչվում են անկյան կողմեր, իսկ այն կետը, որից նրանք դուրս են գալիս, կոչվում է **անկյան գագաթ**:

Որպես անկյունների չափման միավոր վերցվում է **աստիճանը ( $1^\circ$ )**:

Անկյուններ կառուցելու և չափելու համար օգտագործում ենք փոխադրիչը՝




Անկյունները լինում են՝ ուղիղ, սուր, փոփած ու բութ :



Ուղիղ

անկյունը  $90^\circ$  է,  $\angle B = 90^\circ$

**$\angle B$ -ն ուղիղ անկյուն է:**




Սուր անկյունը փոքր է  
ուղիղ անկյունից:


$\sphericalangle A$ -ն սուր անկյուն է,  $\sphericalangle A < 90^\circ$

Ուղիղ անկյունից փոքր անկյունը կոչվում է սուր անկյուն:

Այն անկյունը, որի կողմերը կազմում են մեկ ուղիղ, կոչվում է փոփած  
անկյուն: Փոփած անկյունը  $180^\circ$  է:




$\sphericalangle D$ -ն փոփած անկյուն է,  $\sphericalangle D = 180^\circ$



Բութ անկյունը մեծ է ուղիղ անկյունից ու փոքր է փոփած անկյունից:

$\sphericalangle C$ -ն բութ անկյուն է,  $90^\circ < \sphericalangle C < 180^\circ$

Այն ուղիղները, որոնց հատումից ստացվող անկյուններն ուղիղ են, կոչվում են ուղղահայաց ուղիղներ:



Անկյունների առավել ճշգրիտ չափումների համար օգտագործում են աստիճանի մասերը՝

բոլոր <<'>> և վայրկյան <<''>> :

$$1^{\circ}=60'$$

$$1'=60''$$

$$1^{\circ}=3600''$$

### Առաջադրանքներ

- Ի՞նչ է անկյունը:
- Ո՞րն է անկյունների չափման միավորը:
- Քանի՞ աստիճան է ուղիղ անկյունը:
- Քանի՞ աստիճան է փոքր անկյունը:
- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում սուր անկյուն:
- Ինչպիսի՞ անկյունն է կոչվում բութ անկյուն:
- Ո՞ր ուղիղներն են կոչվում ուղղահայաց ուղիղներ:
  
- Ինչպիսի՞ անկյուններ են  $35^{\circ}$ ,  $89^{\circ}$ ,  $90^{\circ}$ ,  $115^{\circ}$ ,  $18^{\circ}$ ,  $75^{\circ}$ ,  $45^{\circ}$ ,  $60^{\circ}$ ,  $130^{\circ}$  անկյունները:
- Ինչպիսի՞ անկյուններ են  $120^{\circ}$ ,  $180^{\circ}$ ,  $90^{\circ}$ ,  $115^{\circ}$ ,  $45^{\circ}$ ,  $75^{\circ}$ ,  $60^{\circ}$  անկյունները:

- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե ուղիղ անկյունը նրա գազաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:
- Ինչպիսի՞ անկյուններ կստացվեն, եթե փռված անկյունը նրա գազաթից սկիզբ առնող ճառագայթով բաժանենք երկու հավասար մասի:
- Քանի՞ անկյուն կստացվի երկու ուղիղների հատումից: